

ԿՐՕՆԱԿԱՆ

Ընդհանուր Հայոց Վեհափառ Հայրապետի - Կաթուղիկոսի Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ս. Օծումը հրաշափառ հանդիսով կատարուեցաւ Սեպտեմբերի 26ին Վարագայ Ս. Խաչի տօնին Ս. Էջմիածնի Տաճարում։ Բոլոր Հայերի համար այդ օրը տենչալի և նուիրական էր. աշխարհի հայաբնակ ամեն ծայրերից և վայրերից շտապել էին բազմաթիւ հեռագիրներով շնորհաւորել Ս. Օծումն և յայտնել իրանց որդիական հայրասէր ջերմեռանդ զգացմունքը։ Նորին Վեհափառութիւնն, ի ծունկս խոնարհեալ բազ-

կատարած աղօթելով Միածին Որդւոյ Իջման Տեղում, Հայաստանեայց աշխարհի Լուսաւորչի կանգնած Սիօնում, հայցելով մայրենի եկեղեցու պայծառութիւնն և Հայ ազգի բարօրութիւնը, բարեմաղթող հոգւով և շնորհակալ սրտով օրհնեց և օրհնում է ամենքին, որոնք իրենց ջերմաջերմ բարեմաղթութիւնները միացնելով Մայր Աթոռի սրտառուչ պաղատանքներին, մաղթանքներին և աղաչանքներին միաբերան մի աղօթքով դիմած էին Գթառատ Երկնաւոր Նախախնամողին՝ երկար կեանք և զօրութիւն հայցելով Ազգիս Հայրապետին։

Նորին Օծութիւնը շնորհակալութիւն յայտնելով, իւր սրտեռանդն լիուլի օրհնութիւնը սփռում է ամբողջ Հայոց ազգի զաւակների վերայ։